ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունիսի 2022 թվականի N 57-Ա

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» /SEAP/ ՄՇԱԿՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի՝ այլ միջոցների ներգրավմամբ Ստեփանավան համայնքում կայուն զարգացում ապահովելու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» դաշնագրին միանալու, դաշնագիրը ստորագրելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Նվազեցնել CO_2 (և, հնարավորության դեպքում, ջերմոցային այլ գազերի) արտանետումները համայնքի տարածքում առնվազն 30%-ով մինչև 2030թ. մասնավորապես էներգաարդյունավետության բարձացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայնածավալ կիրառման միջոցով:
3. Բարձրացնել համայնքի դիմակայունությունը կլիմայի հանդեպ՝ հարմարվողականության միջոցով:
4. Մշակել արտանետումների ելակետային կադաստր և իրականացնել կլիմայի փոփոխություն ռիսկերի և խոցելիության գնահատում:

5. Ներկայացնել կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր՝ համայնքի ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում, և ներառել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գաղափարները համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աբրահամյան Հրահատ		
Մարտիրոսյան Հմայակ		
Գրիգորյան Արմեն Փ.		
Մարիկյան Հայկ		
Բաղդասարյան Անուշ		
Դավթյան Արմեն		
Պապյան Արթուր		
Գագինյան Ատոմ		
Նազարյան Սյուզաննա		
Նալբանդյան Աղունիկ		
Կիրակոսյան Ջոն		
Իսպիրյան Անուշ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ